Ա. ՉՈՊԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Կ. ԴԱՎԼԱՔՅԱՆ

Արևմտահայ նշանավոր մշակութային հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը, թեպետ ականատեսն էր ժողովրդի ահավոր ողբերգությունների, միշտ վառ լավատեսություն ուներ նրա ազգային ապագայի նկատմամբ։ Նույնիսկ Համիդյան ջարդերի թարմ հետքերով՝ 1897 թ. գրված իր հանրահայտ «Օրոր մայր Հայաստանին» լայնաշունչ բանաստեղծության մեջ Չոպանյանը, առանց տատանվելու, հակադրվում է տիրապետող խուճապային մթնոլորտին։

Մութին մեջեն պիտի ցցվիս հաղթական,
Աչքերդ աստղեր պիտի բլլան հոտավետ,
Եւ լույս պիտի թափի ճերմակ մազերեդ։
Պիտի կանգնիս ճամփաներուն բերանը,
Պիտի քանդես Բռնության սև խորանը,
Ոտքի՛ ելիր, ցավերդ երկունքն են հսկա
Ով մա՛յր, աշխարհ մը ծոցիդ մեջ կը խլրտա։

Ժողովրդին «սիրտ տալու» հետ մեկտեղ, Չոպանյանը վստահ էր, թե չի կարելի ծածկել իրականությունը, դա վտանգավոր կլիներ, այլ «պետք է հայտնել կացությունը իր բոլոր գառնությամբ» և քաջալերել նրան[1]։

Այդ լավատեսությունը ամուր խարսխվում էր Չոպանյանի քաղաքական հավատամքի, ազգային-ազատագրական պայքարի ուղիների և հաշողության մասին իր սեփական մտահանգումների ու տեսության համակարգի վրա, որը նա մշակեց Պոլսից 1895 թ. ընդմիշտ հեռանալուց անմիջապես հետո։

Չոպանյանի քաղաքական հավատամքը բովանդակում էր հիմնականում երկու կետ՝ ազգի սեփական ուժերի և հնարավոր դաշնակիցների ճշգրիտ հաշվառումն ու առավելագույն օգտագործումը։

Սեփական ուժերի մոբիլիզացիայի խնդիրը։

Այդ մասին Ա. Չոպանյանի հայացքները հարցերի մի շատ լայն ու բարդ շրջանակ են ներառնում. լուսավորական, պրոպագանդիստական, նյութական, ռազմական և այլն։ Ազգի ինքնաճանաչման, ինքնագիտակցության մակարդակի որակական բարձրացման անհրաժեշտությունը, մի խնդիր, որի իրականացմանը նա նվիրաբերեց իր գիտակցական ողջ կյանքը, ըստ Չոպանյանի՝ հիմքը և կարևորագույն պայմանն էր ազգի համախմբման, առանց որի օբյեկտիվորեն անհնարին պիտի լիներ պայքարի հաջող ելքը։

Չոպանյանը անվերապահորեն արդարացի և ճիշտ էր գտնում հայոց ազգային-ազատագրական պայքարը։ Նրա տարակարծությունը ժամանակի հայ քաղաքական ուժերի հետ մի հիմնական կետում էր՝ խնդրի գործադրման տակտիկայի մեջ։ Եվ այդ տարակարծությունը սկսվում էր հենց կոնսոլիդացիայի՝ ազգային ուժերի միավորման, համախմբման հարցից։ «Կուսակցությունը, որուն կը պատկանիմ,—գրում էր նա,—կը կոչվի «հայոց ազգ» և մինչև որ

---

1 «Անահիտ», 1898, № 1, էջ 5։

հայկական ճգնաժամը չվերջանա, մինչև որ հայոց հարցը չլուծվի, պիտի չգադրիմ մեր ազգային գործունեության մեջ կուսակցական կոիվին դեմ կռվելե և մեր դատին բարեհաջող լուծման համար մեր ազգին բոլոր ուժերուն միացման անհրաժեշտությունը քարոզելե»[2]։

Զոպանյանը կտրականապես մերժում էր անջատ գործողությունների, լրջորեն չնախապատրաստված ելույթների տակտիկան, որի միակ նպատակը, ըստ էության, Եվրոպայի ուշադրությունը հրավիրելն էր։ Նման գործողությունների հեղինակների մասին նա դառնությամբ գրում էր. «Նրանք «ժամանակ չէին կորսնցներ» ուսումնասիրություն, բաղդատություն, խորհրդածություն ընելով։ «Ոտքի՛ ելեք» կը գոչեին, և այլաչափ։ Ինչպե՞ս, ո՞ւր, ի՞նչ հույսով, ի՞նչի վրա կոթնելով, ինչի՞ հանգելու համար։—Ասոնք ավելորդ հարցումներ էին»[3]։ Սրան հակառակ, Զոպանյանը պահանջում էր լուրջ նախապատրաստություն, արագ, գաղտնի (ոչ թե լրագրերում պարծենկոտությամբ մատնտու տվյալներ հաղորդել, որը տարածված ախտ էր), պատեհ րոպեի ճիշտ ընտրությամբ, միասնաբար և կարևոր մի շրջանում հանդես գալ։ Միայն այն դեպքում, երբ ամբողջ ժողովուրդը կհենվի իր բազկին, կկոթնի իր զենքին, միայն այդ պայմաններում, եթե նույնիսկ լիներ Եվրոպայի միջամտությունը, դա կարող էր մեզ օգտակար լինել, այլապես նրանք «մեզ պիտի կոխկռտեն, մեզ պիտի ձուլեն, մեզ պիտի հալեցնեն իրենց մեջ»[4]։

Խիստ քննադատելով տարանջատ ելույթների տակտիկան, Զոպանյանը ամենալուրջ ուշադրություն է հրավիրում ինքնապաշտպանության կազմակերպման խնդրի վրա բոլոր այն ոչարագաներում, երբ հայության որևէ հատվածը վտանգվում էր։ «Պետք է աշխատիլ, որ, երբ հարձակում կրեն, Թուրքիո հայերը զգացումն ունենան ինքնապաշտպանության... Յուրաքանչյուր գյուղի մեջ երկու մարդ անաղմուկ հաստատված, իբր բժիշկ, քահանա, վարժապետ,—կարող են խուլ և տևական պրոպագանդով մը այդ զգացումը արթնցնել բնակչության սրտին մեջ, և հարձակման րոպեին՝ ինքնապաշտպանության օրինակը իրենք իսկ տալ»[5]։

Վերջին հարյուր տարիների ընթացքում բազմաթիվ են եղել քաղաքական գործիչներ, թե նույնիսկ կուսակցություններ, որոնք գտել են, թե հայ ժողովրդի կոտորածները, մեր հայերիս իսկ սխալ քաղաքական ընթացքի հետևանքն է, քանի որ Թուրքիայի և Թուրքերի հետ լեզու գտնելու փոխարեն դիմել ենք այլ միջոցների։

Թե՛ նախկինում, թե՛ մեր օրերում պատմությունը, սակայն, ավելիով ապացուցեց, որ հարցի արմատը ոչ թե Թուրքիայի տարածքում բնակվող ոչ Թուրք տարրերի հնազանդ կամ անհնազանդ սուբյեկտիվ վարքի մեջ է, այլ Թրքականության օբյեկտիվորեն ստեղծված բուն էության մեջ, որը կոչված է ստեղծելու միատարր ազգ-պետություն՝ միասնական տարածքի վրա, նրա սահմաններից դուրս վտարելով կամ ֆիզիկապես բնաջնջելով բոլոր տիպի այլ տարրերին։

Հայ քաղաքական մտքի պատմության մեջ Զոպանյանը առաջիններից մեկն էր, որ փորձեց թափանցել երևույթի խորքը։ «Բաց նամակ դ-ր Բելքին» հոդվածում, որը տպագրվել է «Անահիտ» 1900 թ. № 3-ում, նա մատը գնում է ճիշտ վերքի վրա։ Նա ցույց է տալիս, որ ջարդերի հիմնական պատճառը «հայ խռովարարներու մեկ քանի ապստամբական շարժումները» կամ նույնիսկ քրդական համիդիե գորագնդերի գոյությունը չէր, ինչպես կարծում էր Բելքը։ «Այդ երկու իրողությունները ուրիշ բան չեն, բայց եթե ճակատագրական արդյունքը սկզբնական պատճառներու, որոնք նույն ինքն մահմեդական բռնապետության վրա հիմնված թուրք ռեժիմին իսկությանը մեջ կը կա-

2 «Հորիզոն», 1916, № 27։
3 «Անահիտ», 1899, № 2, էջ 93։
4 Նույն տեղում, № 7, էջ 225։
5 «Անահիտ», 1906, № 3—5։

յանա, ատոնք բիրտ արտահայտություններն են հիվանդության մը, որուն արմատները կը կայանան ոչ հայ տարրին, ոչ իսկ Ֆուրդ տարրին, այլ բուրֆ կառավարական դրության մեջ» (ընդգծումներն իմն են—Կ. Դ.)։

Հնարավոր դաշնակիցների խնդիրը։

Ներքին ուժերի վերլուծությունը Զոպանյանին բերել էր մի համոզման, որ ազգային-ազատագրական պայքարում հաջողության գրավականը նույն այդ ուժերի առավելագույն մոբիլիզացիայի և հնարավոր բնական դաշնակցի համատեղման գործոնի մեջ էր։ Զոպանյանը առաջիններից էր հայ քաղաքական մտքի պատմության մեջ, որ վերաքննության ենթարկեց մեր անցած ուղին, վեր հանելու համար այն թերություններն ու սխալները, որոնք իր կարծիքով, դարավերջին նպաստել էին ազատագրական պայքարի ձախողմանը։ Ընդսմին, նրա վերաքննությունը գնաց ոչ թե 300 տարիների ստրատեգիան ժխտելու, ինչպես հետագայում փորձեր արվեցին, այլ ընդհակառակը, հաստատելու համար Խ. Արովյանի մատնացույց արած «քաղաքական ճշգրիտ ու բեղմնավոր ուղղությունը»[6]։ Նրա վերաքննությունը վերաբերում էր որոշ ժամանակահատվածների, երբ նույն ճշգրիտ ուղղությունից կատարվել էին ճակատագրական դիմադարձեր։

Խոսքը, անշուշտ, դնում է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման մասին։ Պատահական չէ, որ Զոպանյանի անձի մեջ տեսնելով «Թրքականության» վտանգավոր հակառակորդին, Պոլսում Ֆրանսիայի դեսպանի միջոցով թուրք կառավարությունը պահանջում է Ֆրանսիայից վտարել Ա. Զոպանյանին։

Զոպանյանը բարձր է գնահատում Սան-Ստեֆանոյի դաշնագրի ժամանակահատվածը, որի հիմնական բովանդակությունը նա տեսնում էր դեպի Ռուսաստան՝ արևմտահայության կտրուկ շրջադարձի մեջ։ Սան-Ստեֆանոյի ժողովին արված դիմումով, գրում է նա, Ներսես Վարժապետյան պատրիարքը իր փառքի տիտղոսը ստեղծեց, «նոր թվական մը բացավ հայ ժողովրդին, կրոնական գոյություն ունեցող ազգը քաղաքական կովանի մը վրա դրավ, հայուն շահերուն եվրոպական հզոր պաշտպան մը գտավ՝ Ռուսը»[7]։ Բայց այդ առաջին քայլին հետևեց սխալների մի ամբողջ շարք. պատրիարքը և իր շրջապատը հրաժարվեցին ռուսական կողմնորոշումից և թրքական «բարեխնամ» կառավարության թելադրանքով դիմեցին եվրոպական վեց տերությունների հովանավորությանը։ Գործնականում դա նշանակում էր՝ ամեն ինչ թողնել Սուլթան Համիդի ախորժակին։ Զոպանյանը այդ քայլը որակում է իբրև «առաջին ոճիր հայ ազգին դեմ գործված»[8]։

Մի ուրիշ սխալ Զոպանյանը տեսնում էր հայոց կողմից Անգլիայի վրա հույսեր դնելու մեջ։ «Ինչ որ անվիճելի կը թվի ինձ, այն է,—գրում էր Զոպանյանը,—որ Ներսեսյան խումբը Անգլիո վրա չափազանց հույս դնելու սխալը գործած է։ Երբեք չեմ խորհած, թե հայք այդ պահուն մեջ ոչ մեկ կարևորություն ընծայելու չէին Անգլիային, անհրաժեշտ էր ի նկատի ունենալ այդ ահագին կշիռ ունեցող տարրը, բայց պետք էր ըմբռնել թե անգլիական դիվանագիտությունը «թշնամի» էր հայոց ներքին ամենեն սուրբ բաղձանքներուն, մինչ ռուսը իր շահերուն բերմամբ «դաշնակից էր հայուն»[9]։

Թե՛ ինքնասունական թվականներին, թե՛ հետագայում հայ գործիչներից շատերը, այդ թվում և Ա. Զոպանյանը, շատ անգամներ հենվել են այսպես կոչված «հայասեր» կառավարությունների կամ անհատների վրա։ «Հայասիրությունը» բավականին ծամծմված տերմին էր և միանգամայն անիմաստ՝ երբ խոսքը գնում էր պետությունների քաղաքականության վերաբերյալ։ Էա-

6 «Անահիտ», 1948, № 7, էջ 3։

7 «Անահիտ», 1899, № 3, էջ 89։

8 Նույն տեղում, էջ 85։

9 «Անահիտ», 1907, № 10—12, էջ 166։

կանը պետական շահն էր իբրև մշտական գործոն, որով բացատրվում էին այս կամ այն պետության քայլերը։ Ա. Զոպանյանը, առաջիններից մեկը, թափանցեց երևույթի խորքը, տեսնելու համար, որ մեր տարածքաշրջանում ռուսական կայսրության շահը այդ տերությունը օբյեկտիվորեն դարձնում էր հայոց շահերի դաշնակից։ Ռուսաստանը նա համարում էր «այն զորությունը, առանց որուն կամ՝ին անհնար է, որ հայոց բախտը վնուի (ընդգծումը Ա. Զ—ինն է)[10]։

Նա խիստ դատապարտում է «հայ պոլիտիկոսներին», որոնք Թուրքին նախընտրում էին ռուսից։ «Ազգակուլ» ռուսեն տիրացուական վախն է միշտ, որ այդ զգացման խորը կը թաքչի», գրում է Ա. Զոպանյանը, ցուցադրելով, թե ինչպես այդ պոլիտիկոսները սին հույսեր են փայփայում հայկական ինքնավարություն ստանալ Անգլիայի հովանավորությամբ և Թուրքիայի հավանությամբ[11]։

Ա. Զոպանյանը մանրամասն դիտարկում է հայության հնարավոր դաշնակիցների հարցը։ Անգլիային, ինչպես տեսանք, նա համարում է հայության իղձերի թշնամի, Գերմանիայի գործելակերպը հայտարարում է «գազաթնակետին հասած թրքամոլություն», մերժում է նաև Ֆրանսիայից որևէ էական սպասում։ Հատկանշական է, որ նա տարբերակում է պաշտոնական Եվրոպան մտավորական Եվրոպայից, որի մեջ կային ոչ քիչ թվով իրոք բարձր կարգի մտավորականներ, որոնք քաջատեղյակ համաշխարհային քաղաքակրթությանը հայոց բերած նպաստին (հենց այդ հարցում ևս անգնահատելի եղավ Ա. Զոպանյանի պրոպագանդիստական գործունեությունը), անվարան կանգնում էին հայ ժողովրդի պաշտպանության դիրքերում։

Ռուսաստանի նկատմամբ քաղաքական կողմնորոշումը Զոպանյանը հիմնավորում է թե՛ պատմականորեն, թե՛ ընթացիկ պահի անհրաժեշտությամբ։ Առարկելով իր ժամանակներում տարածուն այն կարծիքին, թե Ռուսաստանը Արևմտյան Հայաստանին ինքնուրույնություն տալու փոխարեն մտադիր է պարզապես զավթել այն, Զոպանյանը գտնում էր, որ նույնիսկ այդպիսի ելքը նախընտրելի էր, նկատի ունենալով Արևելյան Հայաստանի փորձը ռուսական տիրապետության տակ։ 1914 թ. վերջերին, նա իր նամակներից մեկում գրում է. «Նույնիսկ եթե Էրզրումեն մինչև Սիս ռուսը գրավե և պարզապես կցե, նորեն հայուն համար շատ լավ է»[12]։

Դարասկզբին ռուս կառավարության հակահայ քաղաքականության դեմ ծավալված բուռն պայքարի պայմաններում, Ա. Զոպանյանը հանդես եկավ այն բանի դեմ, որ շատերը նույնացնում էին «տիեզերական ազատականության դեմ ցցվող ցարականությունը» (Ա. Զոպանյանի բնորոշումն է) ռուս ժողովրդի հետ։ «Ապուշություն է,—գրում է նա «Ռուսիա և հայերը» խորագրով մի ծավալուն ուսումնասիրության մեջ,—«ռուս» ըսելով չինովնիկները, կնուտը, Սիպերիան, կախաղանը և բանտերը միայն տեսնել—ատոնք բոլորը ռուս ռեժիմին բացասական կողմն են...։ «Ռուս» ըսելով ես կհասկնամ ամեն ինչ որ ռուս է—Գոգոլը, Դոստոևսկին, Տուրգենևը, Տոլստոյը, Գորկին, որոնք մտավորական բարերարներն են ամբողջ մարդկության համար... կը հասկնամ ռուս ժողովրդին խանդոտ, գաղափարապաշտ, մարդասեր հոգին, կը հասկնամ ռուս զորության կատարած անուրանալիորեն գեղեցիկ ու մարդկօգուտ դերը՝ մահմեդականությունը զսպելու և Թուրքիո գերի ազգությանց ազատման նպաստելու, կը հասկնամ ռուս գիտությունը, գեղարվեստը, կը հասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանդուգն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տված է ռուս տարրը՝ ազատության Դատին համար ու, վերջապես, «ռուս» ըսելով ես միշտ կը հիշեմ բարիքը, զոր Մեծն Պետրոսի ցեղը ըրած է անցյալի մեջ՝ հայության և

10 «Անահիտ», 1899, № 3, էջ 80։

11 «Անահիտ», 1907, № 10—12, էջ 162։

12 Ա. Զոպանյան. Նամակների. էջ 120։

կը տեսնեմ օգուտը, զոր իմ ազգս կարող է ապագային մեջ քաղել ռուս զորութենեն»[13]։

Ռուսական կողմնորոշման հարցը դարասկզբին արդեն բավականին գերակշռություն էր ստացել թե՛ քաղաքական տարբեր հոսանքների ու խմբավորումների մոտ, թե՛ մանավանդ կովկասահայ և արևմտահայ շատ մտավորականների հայացքներում։ Ա. Չոպանյանին գրված մի նամակում է Կոմիտասը հայտնել իր թևավոր միտքը՝ «Չիք փրկություն արտաքո Ռուսիոյ»։ Նույն նամակում նա շարունակում էր շարադրել իր համոզմունքը. «Չպետք է բաժնվինք, չպետք է խաբվինք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն, միանալու ենք և գործնական ճամբան բռնելու, ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունը ամփոփել ռուսի իշխանության տակ»[14]։ Նամակը գրված է առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 1912 թ. դեկտեմբերին։ Դրանից ճիշտ մեկ տարի հետո, 1914-ի հունվարին, Գրիգոր Զոհրապը գրում է Չոպանյանին. «Մեկ ույժ մը միայն, որին ես գոնե անձնապես, և դուն ալ ինծի հետ, փարած էի սկիզբեն ի վեր... ույժ մը, զոր, երբ անդին բոլոր հայերը կը հարվածեին, կը նախատեին, սեսք կը փայփայեինք, ույժ մը, զոր հաջողեցանք հայոց պաշտպան դարձնելու... այդ ույժը, ըսելու պետք կա՞ միթե, ռուսական պետությունն է»[15]։

Ռուսական կողմնորոշման օգտին աշխատանքը, որին զինվորագրվեցին արևելահայ և արևմտահայ շատ գործիչներ, տվեց լուրջ արդյունքներ՝ նույնիսկ ցարական իշխանության քաղաքականության պայմաններում, որն այդ պահին Թուրքիայում հետապնդելով իր ուրույն շահերը, հայության համար նպաստավոր չէր։ Ստրատեգիական նպատակը՝ ժողովրդի գոյապահպանության և հարատևության խնդիրը, սակայն, շատ ավելի ծանր էր կշռում, քան ժամանակավոր բնույթի տակտիկական կնճիռները։

Պատահական չէ, որ ընդհանրացնելով անցյալ տասնամյակի արդյունքները, Ա. Չոպանյանը 1907 թ. արձանագրում է. «Այսօր հայոց մեծամասնությունը ըմբռնած է, թե առանց Ռուսիո աջակցության հայոց հարցը չի կըրնար լուծվիլ»[16]։

Անցյալ դարավերջին և քսաներորդի սկզբներին Ա. Չոպանյանը լրջորեն մտահոգված էր նաև այն հարցով, թե ինչպիսին պետք է լինի հայության վերաբերմունքը դրացի տերությունների և ժողովուրդների նկատմամբ։ Նա համոզված էր, որ անհրաժեշտ է ամրապնդել բարեկամական հարաբերությունները վրացիների հետ, աջակցել արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին։ «Ես այն սակավաթիվ հայերեն եղա,—դրում էր նա,— որ ուշադրություն հրավիրեցի արաբական ապստամբության վրա և հայոց օգնությունը անհրաժեշտ նկատեցի այդ ապստամբությանը»[17]։ Պարսկաստանի պարագայում նա անհրաժեշտ էր գտնում շարունակել հաշտ դրացիական համակեցությունը, քանի որ Թուրքիայի համեմատությամբ Պարսկաստանում հայության համար շատ ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել[18]։

Ա. Չոպանյանը ուսումնասիրել է նաև քրդական ցեղերի հետ հայության հարաբերությունների խնդիրը։ Քրդական ապստամբությունների պարագայում, Ա. Չոպանյանը, անշուշտ, պահանջում էր դիմադրական կարողություն դրսևորել, որը ինքնապաշտպանության մասին նրա հայացքների կարևոր բաղկացուցիչն էր։ Միաժամանակ, իբրև սկզբունքային հիմնահարց, նա գոտ-

---

13 «Անահիտ», 1906, № 3—5, էջ 70։

14 Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆոնդ, 1-ին բաժին, № 3416։

15 «Անահիտ», 1930, № 3, էջ 12։

16 «Անահիտ», 1907, № 10—12, էջ 177։

17 «Անահիտ», 1906, № 3—5, էջ 71—72։

18 Նույն տեղում։

նում էր, որ երկու ժողովուրդներն էլ ընդհանուր թշնամի ունեն, ուստի պետք է դաշնակցեն նույն բռնապետության դեմ մղվող պայքարում։ Նա այն համոզմունքին էր, թե պետք է օգնել քրդերի ազգային ինքնագիտակցության կայացմանը։ Այդ պարագայում, քուրդը «ճակատագրականապես բախտակից մը և դաշնակից մը պիտի սկսի տեսնել հայուն մեջ և փոխանակ հայուն դեմ դարձնելու իր դանակը, բռնավորին դեմ պիտի դարձնե զայն»[19]։

Ա. Զոպանյանը գործնական կապեր է հաստատում քրդական ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկի՝ Աբդուռահման Բեդրխանի հետ, որը Կահիրեում հրատարակում էր «Քուրդիստան» անունով երկշաբաթաթերթ։ Իր «Անահիտում» Զոպանյանը հրատարակում է Բեդրխանի մի նամակը, որի մեջ ասված է. «...դիտեմ, թե քուրդերուն և հայերուն շահը միևնույնն է, և ատոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներուն միջև»[20]։ Հատկանշական է, որ մի քանի ամիս անց Զոպանյանը հրատարակում է նույն Բեդրխանի կոչը՝ ուղղված իր ցեղակիցներին։ «Ո՜վ քուրդեր,— ասված է կոչի մեջ,—որ միշտ հռչակավոր եք եղած ձեր քաջասրտությամբ, խեղճ, անվնաս հայերը ջարդելու ելեր եք հիմա, մինչդեռ ընդհակառակը, անոնց օգնության հասնելու էիք և զանոնք ձեր պաշտպանության տակ առնելու էիք։ Ինչպե՞ս պիտի սրբեք այդ արատը, որով ձեզ աղտոտեցիք, այդ խեղճ մարդիկը սպանելով և Աբդուլ Համիդի պաշտոնյաներուն մեղսակից հանդիսանալով։ Ա՞յդ էր ձեր քաջությունը, ձեր պատվո և վեհանձնության համբավը»[21]։

Մասնավոր հետաքրքրության առարկա է Զոպանյանի տեսակետը Թուրքիայի և Թուրք ազգության նկատմամբ։ Անհրաժեշտ է նախ շեշտել, թե նա բազմիցս և համառ հետևողականությամբ պնդում էր հայոց կողմից Թուրքական իրականությունը (լեզուն, մշակույթը, տնտեսությունը, գաղափարականությունը, բարքերը, հոգեբանությունը և այլն) լրջորեն և համակարգված ուսումնասիրելու անհրաժեշտության վրա, համոզված լինելով, որ չի կարելի հակառակորդի հետ պայքարել առանց նրա մասին լուրջ գիտելիքների կամ, ավելի վատ՝ նման գիտելիքների փոխարեն պարծենկոտ արհամարհանք դրսևորելով։ Ապա նա գտնում էր, որ տվյալ պահին Թուրքիայում տիրում էր կրոնական խավարամտությունը։ Երկիրը գտնվում է դարերի խորքում, քաղաքակրթությունից շատ հեռու, և հայոց պայքարը նրա դեմ՝ պայքար է հանուն ազատագրության։ Բայց, նկատում է Զոպանյանը, «վերջնական ու անվերապահ ատելություն մը չէ, որ կուզեմ քարոզել Թուրքին դեմ։ Ոչ մեկ ցեղ ատելու չէ մարդ... Թուրքն ալ պիտի ըլլա օր մը քաղաքակիրթ ազգ մը— երբ «ազգ» մը սկսի ըլլալ, փոխանակ վրանը զարկած սպառազեն վաչկատուներու ջոկ մը ըլլալու, ինչպես է ցարդ, երբ լրջորեն բանա իր միտքն ու հոգին ազատության, քաղաքակրթության, արդարության, մարդկայնության սկզբունքներուն»։ Զոպանյանը նշում է, թե հայ ժողովուրդը ազատություն ձեռք բերելուց հետո ինքն իսկ պիտի օգնի Թուրք ժողովրդին նրա մտավոր ու բարոյական զարգացման գործում։ «Մեր շահը կը պահանջե արդեն,— ասում է նա,—որ մեր դրացի բոլոր ցեղերը քաղաքակրթվին»[22]։

Հետագա տասնամյակներում ևս Զոպանյանի հայացքները ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդրում սկզբունքային փոփոխություններ չկրեցին։ Ճշմարիտ է, որ սպասվող համաշխարհային առաջին պատերազմում Անգլիայի ու Ֆրանսիայի՝ Ռուսաստանի հետ դաշնակից լինելու պարագան սին հույսեր էր ներշնչել Ա. Զոպանյանին, թե առաջին երկուսը պիտի իբր օգնեն Ռուսաստանին ազատագրելու Արևմտյան Հայաստանը, այնտեղ մի

19 «Անահիտ», 1900, № 4—5, էջ 131։
20 Նույն տեղում, էջ 132։
21 «Անահիտ», 1901, № 1, էջ 25։
22 «Անահիտ», 1906, № 3—5, էջ 72—73։

տեսակ հայկական Լիբանան ստեղծելու համար։ Սակայն նույնիսկ այս դեպքում, նման մի «Լիբանանի» ստեղծումը նա պատկերացնում է միայն Ռուսաստանի հովանավորությամբ։ Այդ մասին նա նշում է Լեոյին ուղղված մի նամակում, 1912 թ.[23]։ Արդեն 1913 թ. նա դարձյալ շեշտում է իր սկզբունքային դիրքորոշումը ֆրանսիացի հասարակական գործիչ Վիկտոր Բերարին դրված նամակում. «Ռուսիա կոչված է գերակշիռ դեր մը կատարել Հայկական հարցին լուծման մեջ, ինչ ձևով ալ ըլլա այդ լուծումը[24]»։

Հետաքրքրական մի պարագա ևս։ Պատերազմի նախօրյակին, ինչպես և Սան-Ստեֆանոյից անմիջապես հետո, Թուրքիան փորձում է շեղել արևմտահայ հասարակական կարծիքը, բթացնել կամ ուղղակի խաբել նրան, բանակցությունների մեջ մտնելով Պոլսի հայկական որոշակի խավերի հետ։ Ջոպանյանը լավ էր սերտել պատմական փորձը, հենց ինքն իսկ ջախջախիչ քննադատության էր ենթարկել Սան-Ստեֆանոյի դաշնագրին հետևող անցքերը։ Այժմ պատմությունը կրկնվում էր և նա չվարանեց Թիֆլիսի «Մշակի» միջոցով զգուշացնել. «Ինչպես կիմանամ, Պոլսի հայ աղաներու շրջանակներեն ոմանց մեջ ձգտումներ կան Թուրքին հետ գլուխ-գլխի խնդիրը փակելու և «Լուսարձակ» ու «Ժամանակ» թերթերը այդ ձգտումին արձագանքը կը հանդիսանան, անգիտակից գործիքներ դառնալով դավի մը, որուն արդյունքը պիտի ըլլա, եթե հաջողի, հայկական Դատին սպանումը... Նույնիսկ Ադանայի կոտորածին ու այս վերջին սահմանադրական չորս տարիներուն շնական կատակերգությունեն որևէ արդյունք սպասող մեր միամիտ հայրենակիցները շատ լավ պիտի ընեն, եթե, երբ դեռ ուշ չէ, ետ քաշվեին այդ սխալ ճամփեն»[25]։

Լիբերալ հայացքների տեր Ա. Ջոպանյանի համար ողջունելի էր ցարիզմի տապալումը և դեմոկրատական Ռուսաստանի հռչակումը, որի վրա կողմնորոշումը առավել շեշտված դրսևորվեց այդ ժամանակահատվածում։ Իսկ երբ իշխանությունը անցավ բոլշևիկներին, նա չհանդուրժեց պատերազմը անմիջապես, առանց անեքսիաների դադարեցման լոզունգը, որը նշանակում էր հայոց ճակատագիրը գարձյալ թողնել իր դահճի տնօրինությանը։ Այնուամենայնիվ, երբ հրապարակվեց Արևմտյան Հայաստանի մասին Լենինի ստորագրած դեկրետը, Ջոպանյանը պաշտպանեց այն, միաժամանակ, քիչ հետո, նոր քննադատության կրակ ուղղելով Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի դեմ, որով ռուս գորքերը դուրս էին բերվում Հայաստանից։ Ռուսական կողմնորոշումը, սակայն, միշտ մնաց որպես ստրատեգիական հիմնուղի, քանի որ այդ միջոցով էր Ջոպանյանը տեսնում հայության գոյատևման հարցի դրական լուծումը տվյալ ժամանակահատվածում և ազգային իղձերի իրականացումը ապագայում։

Արդեն 1921 թ. հոկտեմբերի կեսերին, այսինքն՝ Ռամկավար-ազատական կուսակցության ստեղծումից (որի ղեկավար դեմքերից մեկը եղավ Ջոպանյանը) երկու շաբաթ անց, Ջոպանյանը հրապարակավ հայտարարեց, թե ելնելով հայ ժողովրդի աշխարհաքաղաքական ծանր կացությունից, ինքը կոչ է անում գործակցել այն բոլոր ուժերի հետ, որոնք կարող են օգտակար լինել նրա փրկության հարցում, այդ թվում կոմունիստների հետ[26]։ Իսկ ևս մի քանի շաբաթ անց, նա Ազգային պատվիրակության նախագահ Նորատունկյանին առաջարկում է հենվել նոր Ռուսաստանի զորության վրա[27]։

Օրինաչափ է, որ հենց բուն ՌԱ կուսակցությունը կանգնում է համանրման դիրքի վրա։ Փարիզի անհատական արխիվներից մեկում, որը դեռևս մշակված չէ, տողերիս հեղինակին հաջողվեց ծանոթանալ ՌԱ կուսակցու-

23 ԳԱԹ, Լեոյի, ֆոնդ, № 38/1։
24 «Մշակ», 1913, № 34։
25 Նույն տեղում, № 3։
26 «Ապագա», 1921, № 4։
27 ԳԱԹ, ԱՀՖ, 4-րդ բաժին, № 389։

թյան գոյավորման շրջանի որոշ արձանագրություններին։ Հետագա բոլոր հղումները «ԱԱ» (անհատական արխիվ) նշումով վերաբերում են այդ նյութերին։

ՌԱ կուսակցության առաջին (ժամանակավոր) կենտրոնական վարչության նիստերից մեկում, որին նախագահում էր Վ. Թեքեյանը, 1921 թ. նոյեմբերի 16—17-ին արձանագրվում է, թե Ռուսաստանը ամրապնդվելու նշաններ է ցուցաբերում և «հետևաբար, ոչ միայն հաշվի առնվելիք ազդակ մրն է, այլ Ռուսահայաստանի վերաբերմամբ գոնե՝ իր բարեկամությունը վերջին ծայր կենսական է» (ԱԱ)։ Կուսակցության Եվրոպայի շրջանակի պատգամավորական առաջին ժողովը իր հինգերորդ նիստում, 1922 թ. ապրիլի 6-ին լսում է Մ. Պապաջանյանի զեկուցումը ազգային քաղաքականության մասին։ Արձանագրվում է, թե կովկասյան նախկին կառավարությունների պատվիրակությունները 1922 թ. հունվարի 11-ին Կաննի կոնֆերանսում նոտա են ներկայացրել։ Այդ նոտան, որը, ինչպես պատգամավորականն է գնահատել՝ անբացատրելի է «նույնիսկ դաշնակցականներու տեսակետով, հակառուսական բնույթ ունի»։ Այնուհետև առաջին պատգամավորականը որոշում է. «Նկատելով որ այդ նոթան բացարձակ ազգավնաս քաղաքականության մը հիմքը դրած է, ժողովս կը գտնե, որ մեր կուսակցությունը պետք է բոլոր ջանքն ի գործ դնե, որպեսզի այդ նոթա–ի ծրագրյալ նպատակները Ռուսիո դեմ չիրագործվին՝ ոչ ռազմական, ոչ տնտեսական և ոչ այլ ֆինանսական տեսակետով» (ԱԱ)։ Նոտայի հիմնական պահանջն էր ռուսական խորհրդային զորքերի հեռացումը Այսրկովկասից։

Անհրաժեշտ է շեշտել, որ քսանական թվականների սկզբներում հայոց բոլոր ավանդական կուսակցությունները համամիտ էին մի էական հարցում՝ նրանք դեմ էին Հայաստանի տարածքից խորհրդային զորքերի դուրս բերման գաղափարին։ Մասնավորապես ՀՀ դաշնակցությունը այդ դիրքորոշումը դրսևորեց 2-րդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի 1924 թ. փետրվարին Լյուքսեմբուրգում կայացած նիստի ընթացքում։ Վրաստանի առթիվ ընդունվեց վրաց մենշևիկ կուսակցության առաջարկը ռուսական զորքերը անհապաղ դուրս բերելու պահանջով։ Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա «ներկա պայմաններու մեջ ՀՀ դաշնակցությունը հայ ժողովրդի համար բաղձալի չէ նկատած ռուս զորքերու անհապաղ հեռացումը մեր երկրեն»[28]։

ՌԱ կուսակցությունը (ինչպես նաև ՍԴ հնչակյան կուսակցությունը) ավելի առաջ գնաց։ Ժամանակահատվածում օբյեկտիվորեն ստեղծված քաղաքական պայմանների մեջ հայ ժողովրդի գոյատևման ու զարգացման հարցի միակ հնարավոր լուծումը նա տեսավ գոյություն ունեցող խորհրդային Հայաստանի մեջ և արդեն 1922 թ. հունիսին իր առաջին համագումարի որոշումով ճանաչեց այն և պատրաստակամություն հայտնեց «ապակցել և մեր ուժերը տրամադրել հայկ. կառավարության՝ Հայաստանի տնտեսական և բարոյական վերաշինության, ինչպես նաև հայ ժողովրդի ֆիզիկական պահպանման աշխատանքին համար»։ Միաժամանակ, վճռեց արգելել որևէ կարգի արկածախնդրական ձեռնարկ, որը կարող էր վտանգել ժողովրդի ու պետության գոյությունը (ԱԱ)։ Կուսակցության ընդհանուր դիրքորոշումը փութով արձագանք է գտնում ստորին օղակներում։ Գրեթե բոլոր շրջանակները և ակումբների մեծամասնությունը բազմակողմանի քննարկում էին քաղաքական կոզմնորոշման հիմնագիծը։ Վիճաբանություններից, թեր ու դեմ կարծիքներից, դատումներից, փաստարկումներից հետո, այնուամենայնիվ, տեղական մարմինները նույնպես հաստատակամ ընդունում էին ռուսական կոոմնորոշումը։ Եգիպտոսի շրջանային երրորդ պատգամավորական ժողովն, օրինակ, 1923 թ. ապրիլի 21-ին, 15 կողմ 4 դեմ քվեներով ընդունեց քաղաքական ծրագիրը ներկայացնող բանաձևի հետևյալ կետերը.

---

28 «Հայրենիք» օրաթերթ, 18 մարտի 1924։

«Ա.—Նկատելով որ Հայաստանի հանրապետության, Վրաստանի և Ադրբեջանի մեջ ապրող մեր հայրենակիցներուն ֆիզիկական գոյության պահպանությունը կախում ունի միմիայն ռուսական պաշտպանությունե, և նկատելով, որ Հայաստանի հանրապետության քաղաքական գոյությունը և անոր տրգի սահմաններուն ընդարձակումն ալ դարձյալ կախում ունին իր հզոր դրացիին՝ Ռուսիո բարյացակամութենեն և օժանդակութենեն,

կորոշե,

իր արտաքին քաղաքականության առանցքը Ռուսիան նկատել, ինչ որ ալ ըլլա այս վերջնույն պետական ռեժիմը։

Բ.—Նկատելով, որ եվրոպական ուրիշ պետություններ և Ամերիկա իրենց հեռավորության և տնտեսական ու քաղաքական հակամարտ շահերուն պատճառով չեն կրնար շահագրգռվիլ Հայկական հարցով, և եթե շահագրգռվին իսկ, անկարող են որևէ օգտակարություն ունենալ մեղի համար առանց Ռուսիո հավանության, և

նկատելով, որ այս վերջնոց մոտ կատարվելիք դիվանագիտական դիմումներ, որևէ օգուտ չունենալե զատ, կրնան իբրև գործիք ծառայել տնտեսական և քաղաքական մասնավոր շահերու և նյութ մատակարարել դիվանագիտական խաղերու, որոնց առաջին զոհը կրնա ըլլալ մեր ժողովուրդը,

կորոշե,

Հրաժարիլ Եվրոպայի և Ամերիկայի մոտ վերստին դիվանագիտական դիմումներ կատարելե» (ԱԱ)։

Քաղաքական նման վճիռը, անշուշտ, խարսխվում էր կուսակցության իրատեսական կողմնորոշման վրա, թեպետ քսանական թվականների պայմաններում Արևմուտքը ամբողջական մեկուսացման էր ենթարկել Խորհրդային Միությունը և ամենուրեք ակնկալում էին նորահաստատ իշխանության շուտափույթ փլուզումը։ Էականը ՌԱԿ-ի քաղաքականության համար հենց ինքը՝ Ռուսաստանն էր, անկախ նրա դրոշի գույնից։ Պատահական չէ, որ երկրորդ համագումարը 1924 թ. փետրվարին ընդունում է հետևյալ հատկանշական բանաձևը.

«Աշխարհագրական, քաղաքական և տնտեսական պայմանները Արևելքի ազգերուն մեջ կը դասավորեն հայ ազգը, ատկե անհրաժեշտորեն կը հետևի պետքը արևելյան քաղաքականության մշակումին, որուն առանցքը կը կազմե Ռուսիան—(ընդգծումն իմն է—Կ. Դ.) և որուն ձգտումն է հաշտ ու համերաշխ ընթացքը դրացի բոլոր տերություններու և ժողովուրդներու հետ, ինչ որ արդեն հիմքը կը կազմե Խորհրդային Հայաստանի Հանրապետության ընդգրկած ներկա քաղաքականության» (ԱԱ)։

Ճշմարտություն է նաև այն, որ կուսակցության ներսում թե Խորհ. Հայաստանի նկատմամբ քաղաքականության և թե կողմնորոշման հարցերում միշտ չէր, որ կարծիքները անպայման համընկնում էին։ Առանձին գործիչներ կամ մամուլի օրգաններ երբեմն ունենում էին տարբեր, մանավանդ, գաղափարախոսական գետնի վրա եղած հակամարտությունների բերումով, ուղղակի հակադարձ մոտեցումներ։ Հետաքրքրական է, օրինակ, հետևյալ իրողությունը։ 1923 թ., երբ արդեն հայտնի էր, որ Լոզանի կոնֆերանսից ուրեմն և դաշնակիցներից, հայությունը այլևս սպասելիքներ չունի, Ամերիկայի «Պայքար» թերթը բազմիցս շեշտում էր, թե մեր ճակատագիրը կապված է Ռուսիո հետ, իսկ նույն կուսակցության Ֆրեզնոյի «Նոր օրը» 1923 թ. մարտի 30-ի խմբագրականում պնդում էր, թե «մեր դատը դաշնակիցներու հետ է»։

Արմատական նշանակության այս խնդիրներում Ա. Զոպանյանը անվարան էր։ 1923 թ. հունվարին, երբ արդեն իսկ պարզ էր Լոզանի կոնֆերանսի ընթացքը, Ա. Զոպանյանը նամակով դիմում է Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանին. «Մենք պետք է հիմա, ավելի քան երբեք,

փարինք ռուսերուն և գլխավորապես անոնց վրա կռթնելով ջանանք հասնիլ մեր ազգային վերակենդանացման նպատակին իրագործման»[29]։

Մի ուրիշ առիթով Զոպանյանը գնահատում է Խորհրդային Միության, որպես Նոր Ռուսաստանի, իրողությունը և նրա դերը Հայաստանի ճակատագրում։ Նա գրում է. «Նոր Ռուսիան, որ աշխարհիս մեծագույն ուժերեն մեկն է ներկա շրջանին, և որ վաղը պիտի ըլլա ավելի ևս մեծ, կազմակերպված ու հարաճուն ուժ մը, իր (իմա՝ Հայաստանի) դաշնակիցն ու պաշտպանն է, և հայկական քաղաքականության հիմնական անխախտ գիծը պետք է ըլլա այլևս՝ հայ տերության միշտ դաշնակից ու պաշտպան ունենալ այդ մեծ զորությունը»[30]։

Քսանական թվականների կեսերին Սփյուռքի մամուլում քննարկման առարկա է դառնում ԽՍՀՄ Սահմանադրության այն դրույթը, որով արձանագրվում է հանրապետությունների՝ Միության կազմից դուրս գալու իրավունքը։ Հետաքրքրական է, որ դասական կուսակցություններից ոչ մեկը, թեպետ ՌԱԿ-ը իբրև իդեալ ուներ անկախ Հայաստանը, իսկ ՀՀԴ-ն իր բոլոր համագումարների որոշումներում կուսակցության նպատակն էր համարում բոլշևիկյան իշխանության թոթափումը և ազատ, անկախ Հայաստանի ստեղծումը, աշխարհաքաղաքական տվյալ իրադրության մեջ գործնականում չէին դնում նման իրավունքի իրականացման խնդիրը։ Այդ առթիվ Զոպանյանը համոզմունք էր հայտնում. «Քաղաքական այս սիստեմը այնքան նպաստավոր է մեր փոքրիկ Հայաստանին, որ որևէ ողջմիտ հայ չի կրնար Հայաստանի վերապահած լիակատար անկախության իրավունքին փութկոտ գործադրությունը հիմարություն չնկատել»[31]։

Քսանական թվականներից սկսած քաղաքական պայքարները և պառակտումները Սփյուռքում սուր, երբեմն ողբերգական հետևանքներով լեցուն բնույթ են ընդունում։ Հիմնահարցը, անշուշտ, Հայաստանում առկա վարչակարգի նկատմամբ վերաբերմունքի խնդիրն էր։ Երկու կողմերի օգտագործած բառամթերքը հարուստ է քաղաքական հայհոյանքներով և պիտակավորումներով։ Հայաստանի վարչակարգը ընդունողներին, մասնավորապես ՀՀԴ մամուլում, կոչում են «ստրուկներ», «ստրկամիտներ»։ Ա. Զոպանյանը խմբագրում է մի «Բողոք», որի տակ իրենից բացի ստորագրում են Շիրվանզադեն, Տ. Կամսարականը, Լ. Բաշալյանը, Հ. Փուշմանը, Հ. Գյուրջյանը, Է. Շահինը և ուրիշ անվանի մտավորականներ. «Մեզի համար անհերքելի իրողություն մըն է,—ասված է «Բողոքի» տեքստում,—որ Հայաստան մը գոյություն ունի այսօր։ Մենք համոզված ենք, որ ան իր գոյությունը կրնա պահպանել ու զարգանալ միմիայն Խորհրդային Միության հետ դաշնակցած»[32]։

Ա. Զոպանյանի հավատամքը հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցում հենվում էր մեր դարավոր փորձառության և վերջին հարյուրամյակի աշխարհաքաղաքական կացության գիտակ վերլուծության արդյունքների վրա և այսօր իսկ ուսանելի շատ բան է պարունակում իբրև «Վարք Մեծ[illegible]ցի» կարևորագույն մի էջը։

---

29 ԴԱԲ, ԱԶՖ, 4-րդ բաժին, № 415։

30 «Պայքար», 1927, № 29։

31 Նույն տեղում։

32 «Արև», 1926, № 2132։